Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 45

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բադալյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 144-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Աշտարակ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը սկսելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Ափոմյան/

5. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրի վարչական տարածքում Ներսես Շնորհալու անվան միջնակարգ դպրոցի կառուցման վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/

6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

7. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աղձք բնակավայրում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

8. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Արտաշավան, Ղազարավան, Բազմաղբյուր և Նոր Երզնկա բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

9. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Կարին գյուղում գտնվող հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

10. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 144-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 144-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և Աշտարակ համայնքի 2025թ.-ի տարեկան բյուջեի 1-6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

/հազ. դրամ/

	Վարչական բյուջե	***Ֆոնդային բյուջե***	***Ընդամենը***
Եկամտային մաս	5056508.9	1900000.0	6956508.9
Ծախսային մաս	5071591.5	2145792.0	7217383.5
Դեֆիցիտ	-15082.6	-245792.0	-260874.6
Պահուստային ֆոնդ	1250000.0	0	1250000.0

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - Աշտարակ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը սկսելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1.Աշտարակ համայնքում սկսել 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը:

2.Աշտարակ համայնքի 2025 թվականի բյուջեում նախատեսել 30 000 000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2025թ.-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

3.Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:

4. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:

5. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանել համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ոլորտները (կապիտալ բնույթի)՝ որպես առաջնահերթություն:

6. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025-2027թթ.-ի ՄԺԾԾ-ում, 2025թ. տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:

2) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - *Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Ատոմյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի ՀԿՀ-ին պատկանող NISSAN մակնիշի (տիպարը՝ X-TRAIL) 900 CM 61 պետհամարանիշի մեքենան անհատույց օգտագործման նպատակով <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրի վարչական տարածքում Ներսես Շնորհալու անվան միջնակարգ դպրոցի կառուցման վերաբերյալ համաձայնություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Սարգիս Մխիթարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրի վարչական տարածքում իրականացված Ն. Շնորհալու անվան միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների վերաբերյալ հանրային լսման արդյունքը, ղեկավարվելով <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման պահանջներով, նախնական համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրի վարչական տարածքում Ն. Շնորհալու անվան միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքներին:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Բաղդասարյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<ԱՐՄԱԴԱ ԿՈ>> ՍՊԸ-ի լիազորված անձ Գարրի Գրիգորյանի 25.12.2024թ. N 14857 դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի ա) ենթակետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, թույլատրել Աշտարակ քաղաքի Մուղնի 2-րդ թաղամաս, N 107/1 հասցեում գտնվող, 02-001-0372-0002 ծածկագրով 18քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը գովազդային վահանակ տեղադրելու նպատակով կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ <<ԱՐՄԱԴԱ ԿՈ>> ՍՊԸ-ին տրամադրելու 25 /քսանհինգ/ տարի ժամկետով՝ տարեկան 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ վճարով:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աղձք բնակավայրում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 26.12.2024թ. N 2/փ-526 դրական եզրակացությունը՝ Աղձք բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 7) ենթակետի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 31-րդ կետերի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Աղձք բնակավայրի

վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 02-008-0132-0001 ծածկագրից 0,002հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության էներգետիկայի հողեր գործառնական նշանակության փոփոխությունը: Աշտարակ համայնքի Աղձք բնակավայրի 02-008-0132-0001 ծածկագրից, համայնքային սեփականություն հանդիսացող 0,002հա էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության էներգետիկայի գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով՝ կադաստրային արժեքով օտարել <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ին՝ տրանսֆորմատորային ենթակայան կառուցելու նպատակով:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 8</u> - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Արտաշավան, Ղազարավան, Բազմաղբյուր և Նոր Երզնկա բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28.11.2024թ. N 2/փ-467, 04.12.2024թ. N 2/փ-484 և N 2/փ-489, 26.12.2024թ. N 2/փ-528 և N 2/փ-529, 10.01.2025թ. N 2/փ-5, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 12.12.2024թ. N 41 դրական եզրակացությունները՝ Աշտարակ քաղաքում, Արտաշավան, Ղազարավան, Բազմաղբյուր և Նոր Երզնկա բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն և N 1920-Ն որոշումների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-020-0002-0001 ծածկագրով 0,2054հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

2. Հաստատել Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-068-0001-0009 ծածկագրով 0,07հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

3. Հաստատել Աշտարակ համայնքի Բազմաղբյուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-024-0121-0009 ծածկագրով 0,1116հա մակերեսով հողամասից 0,05հա գյուղատնտեսական նպատակային նշանակության /կորիզավոր/ հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

4. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-001-0451-0002 ծածկագրով 0,2229հա մակերեսով հողամասից 0,05976հա գյուղատնտեսական նպատակային նշանակության /հնդավոր/ հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

5. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-001-0039-0096 ծածկագրով 0,4348հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

6. Հաստատել Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-050-0121-0001 ծածկագրից 0,4915հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության փոփոխությունը:

7. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 02-001-0637-0053 ծածկագրով 1,83746հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /հնդավոր/, 02-001-0637-0057 ծածկագրով 0,4825հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /հնդավոր/ և 02-001-0637-0059 ծածկագրով 0,33816հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /կորիզավոր/ հողամասերի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

8. Բոլոր կետերում նշված փոփոխությունները սահմանված կարգով արտացոլել Աշտարակ համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում, Աշտարակ քաղաքի, Արտաշավան, Ղազարավան, Բազմաղբյուր և Նոր Երզնկա բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 9</u> - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Կարին գյուղում գտնվող հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերություն կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 31-րդ կետերի պահանջներով, Համաձայնություն տալ Աշտարակ համայնք, Կարին գյուղի վարչական տարածքում գտնվող, 02-095-0533-0001 ծածկագրով 2,63187հա հողամասից 1,2566հա մակերեսով

համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասը դպրոց կառուցելու նպատակով Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերություն կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Մարիամ Կնյազյանի լիազորված անձ Կորյուն Կնյազյանի 05.12.2024թ. N 13822, Հովհաննես Արիստակեսյանի 11.12.2024թ. N 14154 և Ավագ Օհանյանի 18.12.2024թ. N 14509՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով.

1. Հավանություն տալ Աշտարակ համայնքի ՈՒշի բնակավայրի 02-108-0242-0033 ծածկագրով, Մարիամ Վարազդատի Կնյազյանին սեփականության իրավունքով պատկանող 0,21հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /կորիզավոր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /չորանոցի և օժանդակ շինությունների կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0252-0002 ծածկագրով, Սիրանուշ Սարգսյանին, Ավագ, Արմեն և Արմինե Օհանյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,22հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /խաղող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝

գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0332-0004 ծածկագրով, Հովհաննես Ռուբենի Արիստակեսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,2231հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2025 թվականի հունվարի 15-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ	_____
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ	_____
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ	_____
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	_____
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ	_____
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ